ԱՐՁԱՆԱԳՐԻՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելու վերաբերյալ.

«Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է.

-«Զիգզագ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, քանզի ներկայացված փաստաթղթում էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝

-«Զիգզագ» ՍՊԸ-ի հայտը մերժել,

-3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

3) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 12-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 14-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ավագյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Ստեփանյան

(ստորագրություն)

Կ. Մելքոնյան

(ստորագրություն)

Ա. Ալիխանյան

(ստորագրություն)

Լ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Օ. Ասատրյան

(ստորագրություն)